ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԿ ԷԴՈՒԱՐԴԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ը.00.02 - "Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում" մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2017

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Վարդան Բաբկենի Բոստանջյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Խաչատուրի Մարկոսյան

տնտեսագիտության թեկնածու
Արթուր Ռաֆկի Թամազյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան Տնտեսագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2017 թվականի դեկտեմբերի 8-ին ժամը 15^{00}-ին Երևանի պետական համալսարանում գործող տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդում£

Հասցեն՝ 0009, Երևան, Աբովյան 52

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թվականի նոյեմբերի 7-ին:

015 Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Հ. Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը£ Հայաստանի Հանրապետությունում տնտեսական նոր հարաբերություններին անցման նախորդ ժամանակաշրջանն ուղեկցվեց և ներկայումս էլ ուղեկցվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի գործընթացներով: Դրանցից հատկանշական են մենաշնորհային միտումների ուժեղացմամբ պայմանավորված երևույթները, որոնց գրեթե չվերահսկվող դրսևորումները մասնագիտական շրջանակներում առաջացնում են տարբեր, որոշ դեպքերում՝ նաև իրարամերժ կարծիքներ և յուրովի մեկնաբանություններ:

Տնտեսական զարգացման ներկա փուլում առկա հիմնախնդիրների շարքում իր կարևորությամբ, անշուշտ, առանձնանում է հատկապես հանրային ծառայությունների ոլորտի արդյունավետ գործունեության կազմակերպման հարցը, որը կարևոր նշանակություն ունի երկրում մրցակցային միջավայրի, տնտեսական գործունեության համար հավասար դաշտի և վերջին հաշվով, տնտեսական զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծման գործում: Այդ ուղղությամբ իրականացվելիք քաղաքականությունն, ակնհայտորեն, ենթադրում է համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորում և պետական կարգավորման արդյունավետ և գործուն համակարգի ստեղծում£ Հանրային ծառայությունների ոլորտն իրենից ներկայացնում է բնական մենաշնորհ հանդիսացող համակարգաստեղծ ձեռնարկությունների ամբողջություն, որոնք գործում են ենթակառուցվածքային ճյուղերում, միավորված են ընդհանուր տեխնոլոգիական գործընթացում և թողարկում են հասարակության կենսագործունեության տեսանկյունից հատուկ նշանակություն ունեցող ապանքներ և ծառայություններ: Աշուշտ, տվյալ ոլորտը ռազմավարական դեր ունի ազգային տնտեսության կայունության և բնականոն կենագործունեության ապահովման հարցում: Դրանում գործող ընկերությունների կողմից թողարկվող և արտաքին ու ներքին շուկաներում իրացվող արտադրանքը և ռեսուրսները բավարարում են բնակչության զգալի մասի պահանջմունքները և կարևոր նախապայման հանդիսանում տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման համար: Խիստ էական է նաև ոլորտում գործող սուբյեկտների մասնակցությունը բյուջետային եկամտների ձևավորման գործում:

Հանրային ծառայությունների ոլորտի կենսագործունեության արտաքին և ներքին միջավայրերի փոփոխությունները, ինստիտուցիոնալ կառավարման անհրաժեշտությունը, պետության տնտեսական քաղաքականության ռազմավարական գերակայությունները, ինովացիոն գործընթացների խորացումը և մի շարք այլ հանգամանքներ տվյալ ոլորտի գործունեության պետական կարգավորման արդյունավետ մեխանիզմների մշակման անհրաժեշտություն են ստեղծում: Շուկայական հարաբերություններին անցման պայմաններում դա բխում է հասարակական շահերի պաշտպանության հրամայականից, ինչպես

նաև տվյալ բնագավառում գործող բարդ համակարգերի կառավարման առանձնահատկություններից:

Հանրային ծառայությունների ոլորտը հանրապետությունում դեռևս մնում է տնտեսության պակաս արդյունավետ և ոչ առևտրային հատվածը՝ չնայած վերջին տարիների ընթացքում իրականացված բարեփոխումներին: Շուկայական տնտեսությանն անցման ընթացքում այն ենթարկվել է բազմաթիվ կառուցվածքային փոփոխությունների, որոնք, չնայած իրենց ունեցած դրական ազդեցությանը, հանրային ծառայությունների նկատմամբ համապարփակ մոտեցման և բարեփոխումների հետևողական շարունակության բացակայության պատճառով չեն ապահովել ոլորտում ընդգրկված ընկերությունների բնականոն և հնարավորինս արդյունավետ գործունեություն: Այս առումով, տնտեսական զարգացման ներկա փուլում հանրային ծառայությունների ոլորտում պետական քաղաքականության ընդհանուր դրույթների, ֆինանսական առողջացման ծրագրերի և դրանց իրագործումն ապահովող ինստիտուցիոնալ-կառուցվածքային և կառավարման բարելավման ուղիների վերաբերյալ հայեցակարգային և ռազմավարական մոտեցումների մշակումը ձեռք է բերել մեծ կարևորություն: Միաժամանակ, այդ ուղղությամբ գործնական քայլերի իրականացմանը պետք է նախորդի հանրապետության հանրային ծառայությունների ոլորտի առանձնահատկությունների համակողմանի ուսումնասիրությունը, զարգացման հնարավոր ուղղությունների բացահայտումը, պետական կարգավորման առկա վիճակի վերլուծությունը և միջազգային պրակտիկայում արձանագրված դրական քայլերի ներդրման համար անհրաժեշտ նախադրյալների գնահատումը և այլն: Այս տեսանկյունից, հանրային ծառայությունների ոլորտի պետական կարգավորումը պետք է հիմնված լինի դրանց էության, տեսամեթոդական հիմքերի ու հիմնական բնութագրերի, պետական կարգավորման նպատակների, սկզբունքների և հիմնական ուղղությունների, այդ ուղղությամբ առկա միջազգային փորձի և հանրապետությունում դրա կիրառման հնարավորությունների համակողմանի վերլուծության վրա: Ատենախոսությունը նվիրված է նշված հիմնահարցերի ուսումնասիրությանը, ինչով էլ պայմանավորված են թեմայի ***հրատապությունն ու արդիականությունը***:

<u>Հետազոտության նպատակը և խնդիրները:</u> Աշխատանքի հիմնական նպատակը ՀՀ հանրային ծառայությունների ոլորտի պետական կարգավորման արդյունավետության բարձրացմանն ուղղված մոտեցումների և առաջարկությունների մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել հանրային ծառայությունների էությունը, դրանց տեսամեթոդական հիմքերը, հիմնական բնութագրերը և տնտեսագիտական բովանդակությունը, գնահատել դրանց դերը պետության և հասարակության կյանսագործունեության ապահովման հարցում,

- վերլուծել հանրային ծառայությունների և բնական մենաշնորհների միջև կապը, բացահայտել գոյություն ունեցող ընդհանրությունները,
- ուսումնասիրել հանրային ծառայությունների պետական կարգավորման հիմնական խնդիրները, նպատակները, սկզբունքները և գոյություն ունեցող մոդելները, բացահայտել դրանց կիրառման հնարավորությունները հանրապետությունում,
- մշակել հանրային ծառայությունների ոլորտում գնագոյացման և այդ գործընթացի վերահսկողության մեխանիզմի կատարելագործման ուղիներ,
- վերլուծել հանրային ծառայությունների ոլորտի վիճակը հանրապետությունում, դրանցում ընդգրկված ընկերությունների գործունեության վրա բացասաբար ազդող գործոնները և մշակել հանրային ծառայությունների պետական կարգավորման արդյունավետության բարձրացման ռազմավարական և հայեցակարգային ուղիները:

<u>Ուսումնասիրության օբյեկտը և առարկան:</u> Ուսումնասիրության օբյեկտը ՀՀ հանրային ծառայությունների ոլորտն է, իսկ առարկան՝ հանրային ծառայությունների պետական կարգավորմանն ուղղված քաղաքականությունը£

<u>Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը:</u>

Ատենախոսության համար հիմք են հանդիսացել տնտեսագիտության տեսության դասական աշխատությունները, անցումային տնտեսությանը վերաբերող ուսումնասիրությունները, տնտեսական քաղաքականության տարբեր բնագավառներին վերաբերող հայրենական և արտասահմանյան գրականությունը, այդ ոլորտը կարգավորող ՀՀ օրենքները, իրավական այլ ակտերը: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության և համապատասխան պետական մարմինների պաշտոնական նյութերն ու տվյալները: Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսավիճակագրական, համակարգային, համեմատական և գործոնային վերլուծության մեթոդները:

<u>Ատենախոսության գիտական նորույթը:</u> Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները, որոնք պայմանավորված են հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծմամբ կայանում են հետևյալում.

- "հանրային ծառայություններ" և "բնական մենաշնորհ" հասկացությունների համակողմանի վերլուծության հիման վրա բացահայտվել են դրանց էությունը, հստակեցվել են դրանց սահմանները և ընդհանրությունները, գնահատվել է հանրային ծառայությունների դերը տնտեսական համակարգի բնականոն զարգացման գործում,
- բացահայտվել են հանրապետությունում հանրային ծառայությունների ոլորտում առկա հիմնախնդիրները և մշակվել են դրանց լուծման մոտեցումներ և առաջարկություններ, ինչպես նաև կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածում այդ ուղղությամբ պետական քաղաքականության ռազմավարական և մարտավարական ուղիները,

- հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման մեթոդների համակողմանի ուսումնասիրության հիման վրա առաջարկվել են դրանցից յուրաքանչյուրի կիրառման հնարավոր եղանակները և ձևերը մեր հանրապետությունում՝ հիմնված պետության, ոլորտում գործող ընկերությունների և սպառողների շահերի հաշվեկշռվածության ապահովման վրա, մշակվել են հանրապետությունում բնական մենաշնորհի ոլորտների սակագնային կարգավորման բարելավման մոտեցումներ և կարգավորող մարմնի կողմից իրականացվող վերակսկողության կատարելագործմանն ուղղված առաջարկություններ,
- մշակվել է Հայաստանի Հանրապետությունում բնական մենաշնորհի ոլորտների պետական կարգավորման արդյունավետության բարձրացման ուղղված օրենսդրաիրավական և կազմակերպական միջոցառումների համալիր, այդ թվում՝ բնական մենաշնորհի ոլորտների, գործունեության տեսակների, կարգավորման սկզբունքների և օրենսդրական հիմքերի հստակեցման ու կատարելագործման ուղղությամբ:

Ատենախոսությունում քննարկված հիմնախնդիրներից շատերը Հայաստանի Հանրապետությունում ամբողջական ու համակարգված ուսումնասիրման չեն ենթարկվել և չեն կրկնում այլոց կողմից առանձին հարցերի շուրջ կատարված ուսումնասիրությունները՝ որով էլ պայմանավորված է ստացված արդյունքների գիտական նորույթը:

ՀՀ հանրային ծառայությունների պետական կարգավորման կատարելագործման հիմնահարցերը դիտարկվել են ընդհանուր տնտեսական քաղաքականության համալիրում, որի արդյունքում մշակված մոտեցումների գործնական կիրառումը, մեր կարծիքով, կընձեռի լայն հնարավորություններ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման համար: Առաջարկված մոտեցումները հիմնված են հանրապետության տնտեսության մեջ վերջին տարիներին ձևավորված իրավիճակի համակողմանի վերլուծության արդյունքում բացահայտված միտումների և հանրային ծառայությունների ոլորտում գործող ընկերությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների գնահատման վրա: Դրանց գործնական կիրառումը, մեր կարծիքով, թույլ կտա հանրապետությունում ձևավորել այնպիսի միջավայր, որն առավելագույնս կնպաստի հանրային ծառայությունների պետական կարգավորման հետ կապված խնդիրների լուծմանը:

<u>Աշխատանքի գործնական նշանակությունը:</u> ՀՀ հանրային ծառայությունների պետական կարգավորման կատարելագործման վերաբերյալ առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների կողմից՝ հանրապետությունում տնտեսության զարգացման, գործարար միջավայրի բարելավման և այդ ուղղությամբ պետական քաղաքականության արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների համալիրի մշակման և դրա հետևողական իրականացման

ընթացքում: Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել նաև նշված համակարգերում աշխատողների համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրատարակված են 6 գիտական հոդվածներում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության տեքստը շարադրված է 125 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջաբանում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության առարկան և օբյեկտը, հետազոտության նպատակը և խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների կիրառական նշանակությունը:

Հետազոտության առաջին՝ "Հանրային ծառայությունների էությունը և տնտեսական նշանկությունը" գլուխը նվիրված է հանրային ծառայությունների սոցիալ-տնտեսական բովանդակության, հիմնական գործառույթների, գործունեության առանձնահատկությունների և պետական կարգավորման խնդիրների ու նպատակների ուսումնասիրությանը:

Վերջին տարիներին հանրապետությունում իրականացված տնտեսական վերափոխումների հիմնական նպատակներից մեկն այնպիսի միջավայրի ձևավորումն էր, որն առավել բարենպաստ նախադրյալներ կստեղծեր տնտեսության բնականոն զարգացման համար: Եվ, չնայած այն հանգամանքին, որ նախորդ տարիներին իրականացված վերափոխումները բավականաչափ դրական ազդեցություն ունեցան տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացման վրա, այդուհանդերձ, ներկայումս առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք չեն նպաստում ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորմանը, տնտեսավարող սուբյեկտների գործունեության շրջանակների ընդլայնմանը, և, վերջին հաշվով, տնտեսական զարգացման կայուն տեմպերի ապահովմանը: Մասնավորապես, առկա հիմնախնդիրների շարքում իր կարևորությամբ առանձնանում է հատկապես հանրային ծառայությունների ոլորտի արդյունավետ գործունեության կազմակերպման հարցը, որը կարևոր նշանակություն ունի երկրում մրցակցային միջավայրի, տնտեսական գործունեության համար հավասար դաշտի և, վերջին հաշվով, տնտեսական զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծման գործում: Այդ ուղղությամբ իրականացվելիք քաղաքականությունն, ակնհայտորեն, ենթադրում է համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորում և պետական

կարգավորման արդյունավետ և գործուն համակարգի ստեղծում: Ըստ էության, հանրային ծառայություններ մատուցող ընկերությունները դասվում են բնական մենաշնորհի ոլորտի սուբյեկտների շարքին և հիմնականում ապահովում են հասարակության բնականոն կենսագործունեությունը: Այս տեսանկյունից, էական ընդհանրություններ կան հանրային ծառայությունների և բնական մենաշնորհների միջև, և շատ դեպքերում վերջիններիս բնորոշ առանձնահատկությունները հատուկ են նաև հանրային ծառայություններին:

Ընդհանուր առմամբ, մենաշնորհը, որպես տնտեսագիտական կատեգորիա, ենթադրում է հարաբերությունների մի բազմություն, որոնց ամբողջական և կարգավորված լինելու հանգամանքը կարող է մեծապես նպաստել երկրի համար կարևոր սոցիալական և տնտեսական խնդիրների լուծմանը: Հարկ է նշել, որ մենաշնորհների տեսակների մեջ իր բնույթով, առաջացման պատճառներով և տնտեսական բովանդակությամբ առանձնանում է բնական մենաշնորհը: Վերջինիս հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այս դեպքում առավել նախընտրելի է ներկայանում մեկ կամ մի քանի ընկերությունների կողմից տվյալ ապրանքների կամ ծառայությունների գծով պահանջարկի բավարարումը: Այստեղ որոշիչ գործոն է հանդիսանում մասշտաբի էֆեկտը, ինչի արդյունքում հնարավորություն է ստեղծվում մեկ ընկերության կողմից ավելի քիչ ծախսերով սպասարկել տվյալ ճյուղը:

Ժամանակակից պայմաններում բնական մենաշնորհներն իրենցից ներկայացնում են համակարգաստեղծ ձեռնարկություններ, որոնք կազմում են ազգային տնտեսության կենսագործունեության հիմքը: Բնական մենաշնորհների ոլորտին հիմնականում դասվում են այնպիսի արտադրանք թողարկող և ծառայություններ մատուցող ենթակառուցվածքային ճյուղեր, որոնց մատակարարումների անգամ կարճաժամկետ ընդհատումը կարող է հանգեցնել ամբողջ տնտեսության կենսագործունեության խաթարմանը: Ըստ էության, դրանք իրենցից ներկայացնում են մենաշնորհների հատուկ տեսակ, որոնց գոյությունը պայմանավորված է գործունեության տեխնոլոգիական առանձնահատկություններով: Ընդ որում, դրանց բնորոշ է ցանցային բնույթը՝ որպես արտադրական գործընթացի անբաժանելի տեխնոլոգիական տարրի: Այս դեպքում բացառվում է արդյունավետ մրցակցային միջավայրի ձևավորման հնարավորությունը, ինչն էլ պայմանավորում է բնական մենաշնորհների գործունեության պետական կարգավորման անհրաժեշտությունը: Տնտեսական զարգացման ներկա փուլում դրանք իրականացնում են մի շարք գործառույթներ, որոնք էլ բնութագրում են բնական մենաշնորհների էությունը:

Առաջին, բնական մենաշնորհները թողարկում են հասարակության կենսագործունեության համար չափազանց կարևոր արտադրանք, որը փոխարինելի չէ: Մասնավորապես, ժամանակակից տնտեսությունում անհնար է պատկերացնել ջրամատակարարման կամ էներգամատակարարման համակարգերի գործունեության դադարեցումը: Խնդիրը կայանում է ոչ միայն թողարկվող արտադրանքի անփոխարինելիության, այլ դրանց բացակայության պայմաններում մարդու և տնտեսության կենսագործունեության անհնարինության

մեջ: Միաժամանակ, պետք է նշել, որ բնական մենաշնորհների գոյությունը կապված է համապատասխան ենթակառուցվածքների գործունեության հետ, որոնք հիմնականում վերաբերում են ցանցային համակարգերին: Վերջիններիս դերը չափազանց մեծ է տնտեսության տարբեր ճյուղերի գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի բարձրացման գործում: Բացի այդ, տվյալ ոլորտում գործող ընկերություններին բնութագրական է մեծ կապիտալատարությունը և հիմնական միջոցների բարձր արժեքը, ինչը, մի կողմից, ենթադրում է մեծածավալ ծախսեր, իսկ մյուս կողմից՝ հանգեցնում է զգալիորեն ցածր սահմանային ծախսերի:

Երկրորդ, ենթակառուցվածքային ճյուղերում բնական մենաշնորհները կարևոր դեր են խաղում հեռահաղորդակցության ապահովման և տարածքային զարգացման գործում: Հատկապես բարդ աշխարհագրական և կլիմայական պայմաններ ունեցող երկրներում տրանսպորտային, էներգետիկ, հեռահաղորդակցության ցանցերի առկայությունը հնարավորություն է տալիս ապահովել պետության և հասարակության բնականոն կյանքը: Անշուշտ, այս գործառույթի իրականացման հարցում իր կարևոր դերն ունի մասշտաբից խնայողության էֆեկտը: Վերջինս, իհարկե, կարող է դրսևորվել նաև արդյունաբերության այլ ճյուղերում, սակայն բնական մենաշնորհների ձևավորման կարող է հանգեցնել միայն այն դեպքում, երբ նրանց կողմից թողարկվող արտադրանքի նկամամբ պահանջարկն ունի ցածր էլաստիկություն և փոխարինելի չէ:

Երրորդ, բնական մենաշնորհներն իրականացնում են կարևոր մակրոտնտեսական գործառույթ: Նրանց կողմից թողարկվող արտադրանքի նկատմամբ պահանջարկի ցածր էլաստիկության և արտադրության անկման պայմաններում բնական մենաշնորհները որոշակիորեն մեղմում են ներքին պահանջարկի կրճատումը: Հաշվի առնելով դրանցից զգալի մասի ենթակառուցվածքային բնույթը, կարող ենք նշել, որ հենց նրանք են հանդիսանում տնտեսական անկմանը հաջորդող տնտեսական ակտիվության վերականգնման հիմքը: Ավելին, բնական մենաշնորհի ոլորտի կողմից թողարկվող արտադրանքի և մատուցված ծառայությունների սակագնային կարգավորումը հանդիսանում է գործարար ակտիվության խթանման հիմնական գործիքներից մեկը: Միևնույն ժամանակ, չափազանց էական է նաև բնական մենաշնորհների դերը բյուջետային եկամուտների ձևավորման գործում: Որպես կանոն, տվյալ ոլորտի ընկերությունները, պայմանավորված շրջանառության մեծ ծավալներով, հանդիսանում են խոշոր հարկատուներ: Հետևաբար, նրանց գործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը նպաստում է ոչ միայն տնտեսության տարբեր ճյուղերի կենսագործունեության ապահովմանը, այլ նաև ապահովում է զգալի բյուջետային մուտքեր:

Չորրորդ, բնական մենաշնորհները ռազմավարական նշանակություն ունեն պետության ազգային անվտանգության ապահովման գործում՝ ինչպես երկրի ինքնիշխանության, այնպես ել բնականոն կենսագործունեության ապահովման տեսանկյունից: Հետևաբար, նրանց արդյունավետ գործունեության ապահովումը

հանդիսանում է երկրի քաղաքական և տնտեսական զարգացման կարևորագույն երաշխիք:

Հաջորդ գործառույթը կապված է սոցիալական նշանակության խնդիրների լուծման հետ: Գաղտնիք չէ, որ բնական մենաշնորհի ոլորտում թողարկվող ապրանքները և ծառայություններն ունեն կենսական նշանակություն և կարևոր տեղ են զբաղեցնում արտադրական և ոչ արտադրական սպառման կառուցվածքում: Հետևաբար, տվյալ ոլորտի ընկերությունների ֆինանսատնտեսական կայունությունը կարևոր նախապայման է հանդիսանում բնակչության և տնտեսության կենսագործունեության ապահովման համար: Միաժամանակ, տնտեսական զարգացման ներկա փուլում, բնական մենաշնորհի ոլորտների առևտրայնացման արդյունքում, սոցիալական գործառույթի մասշտաբները զգալիորեն կրճատվել են, ինչը պահանջում է պետության կողմից սպառողների իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված մոտեցումների կիրառում:

Ընդհանուր առմամբ, բնական մենաշնորհները ապրանքային շուկայի այնպիսի վիճակ են, որի պայմաններում արտադրության տեխնոլոգիական առանձնահատկություններով պայմանավորված (դա հիմնականում դրսևորվում է արտադրության ծավալների ավելացման արդյունքում կատարվող ծախսերի նվազեցման միջոցով) պահանջարկի բավարարումը արդյունավետ է մրցակցության բացակայության դեպքում, իսկ բնական մենաշնորհի ոլորտի սուբյեկտների կողմից թողարկված ապրանքները սպառման նպատակով չեն կարող փոխարինել այլ ապրանքներին, ինչի հետ կապված տվյալ ապրանքային շուկայում ապրանքների նկատմամբ պահանջարկն այլ ապրանքների համեմատությամբ ավելի քիչ է կախված գնային փոփոխություններից: Բնական մենաշնորհների գոյությունն ունի օբյեկտիվ բնույթ, դրա դեմ պայքարելն անիմաստ է և ոչ ցանկալի, և նման իրավիճակում պետության հիմնական խնդիրն է դառնում անհրաժեշտ վերահսկողություն և կարգավորում իրականացնել տվյալ ոլորտում: Բնական մենաշնորհների գործունեության կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ այդ ոլորտներում գործող ընկերությունները որոշ դեպքերում կարող են ուղղակի կամ միջնորդավորված գործողություններով սպառողին թելադրել ապրանքների կամ ծառայությունների մատակարարման սեփական պայմանները:

Ընդհանուր առմամբ, բնական մենաշնորհների գործունեության մեխանիզմում հատուկ տեղ է զբաղեցնում պետական կարգավորումը: Վերջինիս անհրաժեշտությունը կապված է շուկայի "բացթողումների և ձախողումների" հետ, որոնցից կարելի է առանձնացնել մենաշնորհների կողմից գերիշխող դիրքի չարաշահումները: Ըստ էության, դրանց բացասական հետևանքների վերացմանն ու կանխարգելմանն է ուղղված պետական կարգավորումը: Հատկանշական է այն հանգամանքը, որ մինչև մենաշնորհների առաջացումը պետության կողմից տնտեսության պետական կարգավորում, որպես այդպիսին, խոշոր հաշվով չի իրականացվել: Այս առումով, բնական մենաշնորհների ոլորտում գործող ընկերություններն առաջինն էին, որոնց գործունեության նկատմամբ պետության

կողմից սկսեց իրականացվել վերահսկողություն և որոշակի կարգավորում: Եթե փորձենք ընդհանուր գծերով ձևակերպել պետական կարգավորման հիմնական նպատակը, ապա, որպես այդպիսին, կարելի է դիտարկել մենաշնորհների գործունեության տնտեսական արդյունավետության, նրանց կողմից մատուցվող ծառայությունների հուսալիության և հասանելիության ապահովումը: Զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում բնական մենաշնորհի ոլորտների պետական կարգավորումն արդարացված է համարվում միայն այն դեպքերում, երբ տվյալ ապրանքը կամ ծառայությունը թողարկվում է մեկ տնտեսավարող սուբեկտի կողմից և այլ սուբյեկտների հետ մրցակցությունը հնարավոր չէ տեխնոլոգիական կամ տնտեսական պատճառներով, իսկ մենաշնորհային ոլորտում գործող սուբյեկտի կողմից արտադրության ծավալների աճն ուղեկցվում է համախառն ծախսերի կրճատմամբ:

Այս առումով, բնական մենաշնորհների պետական կարգավորմանն ուղղված քաղաքականության հիմնական խնդիրներն են.

- սպառողների և բնական մենաշնորհի ոորտում գործող ընկերությունների շահերի և հետաքրքրությունների հաշվեկշռվածության ապահովումը,
- արդարցիության և արդյունավետության սկզբունքների հիման վրա սակագների սահմանումը,
- բնական մենաշնորհի ոլորտի սուբյեկտների կողմից կատարվող ծախսերի կրճատման, սպարսարկման որակի և ներդումների արդյունավետության բարձրացման խթանումը:

Ատենախոսության երկրորդ՝ "Հանրային ծառայությունների ոլորտի գործունեության սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և կարգավորման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում" գլխում ուսումնասիրվել են հանրային ծառայությունների պետական կարգավորման մեթոդները, վերլուծության է ենթարկվել այդ ոլորտում առկա միջազգային փորձը և ներկայացվել են ՀՀ հանրային ծառայությունների ոլորտի նկարագիրը և դրա պետական կարգավորման առանձնահատկությունները:

Հանրային ծառայությունների պետական կարգավորումը կարևոր նշանակություն ունի ինչպես հասարակության բնականոն կենսագործունեության ապահովման, այնպես էլ տվյալ ոլորտի ընկերությունների տնտեսական գործունեության կազմակերպման և իրականացման տեսանկյուններից: Հարկ է նշել, որ պետական կարգավորման նպատակները, խնդիրները և մեթոդները շարունակաբար փոխվում են: Դրանով հանդերձ, սահմանային գնագոյացման մեթոդը հանդիսանում է դասական և հիմք ծառայում մյուսների համար: Ելնելով բնական մենաշնորհի ոլորտում մասշտաբի էֆեկտը պայմանավորող ծախսերի վերաբերյալ ձևավորված պատկերացումներից, պետությունը երկար ժամանակ նշված ոլորտներում գործունեությունը կարգավորում էր սահմանային ծախսերի մակարդակին համապատասխան սակագների սահմանման միջոցով: Սակայն նման գնագոյացումը որոշ դեպքերում հանգեցնում էր բնական մենաշնորհի ոլորտում գործող ընկերությունների կորուստներին: Սովորաբար, նշված խնդիրը լուծվում էր պետության կողմից սուբսիդիաների տրամադրման ճանապարհով, որն ուղղվում էր կորուստների ծածկմանը: Քանի որ ծախսերի ձևավորման վրա

ազդում են բազմանույթ գործոններ, ապա այս դեպքում սուբսիդավորումը հնարավոր չէ դիտարկել որպես բնական մենաշնորհի ոլորտում գործող ընկերությունների արդյունավետ գործունեության խթան: Ավելին, նման կարգավորումը հանգեցնում է բյուջետային ծախսերի չհիմնավորված աճին և հարկատուների հարկային բեռի ավելացմանը՝ անկախ վերջիններիս կողմից հանրային ծառայությունների օգտագործման:

Տնտեսական զարգացման ժամանակակից փուլում բնական մենաշնորհների նշանակությունը կենսագործունեության տարբեր ոլորտներում էականորեն ընդլայնում է պետական կարգավորման նպատակների և խնդիրների շրջանակը: Մասնավորապես, էներգետիկ ոլորտում պետական կարգավորումն ուղղված է էլեկտրաէներգիայի անխափան և անընդհատ մատակարարմանն այն ծավալով, որն անհրաժեշտ է տնտեսության և հասարակության կենսագործունեության ապահովման համար: Կայուն տնտեսական զարգացման համար պետական կարգավորումը պետք է տնտեսավարող սուբյեկտներին հնարավորություն ընձեռի ձեռք բերել իրենց տնտեսական գործունեության իրականացման համար անհրաժեշտ ծավալով և պայմաններով էլեկտրաէներգիա և խթանել էլեկտրաէներգիայի օգտագործման արդյունավետության բարձրացմանը: Քանի որ էներգետիկ ոլորտը հանդիսանում է համակարգաստեղծ ճյուղ, պետական կարգավորման հիմնական նպատակ է դառնում ազգային տնտեսության կայուն զարգացման ապահովումը: Այս դեպքում պետական կարգավորումը պետք է ուղղված լինի այնպիսի ենթակառուցվածքի ձևավորմանը, որի պայմաններում կստեղծվեն պայմաններ տարածքային զարգացման և տնտեսության տարբեր ճյուղերի բնականոն գործունեության համար:

Սոցիալական նշանակության խնդիրների լուծման առումով պետական կարգավորումը պետք է ապահովի բնակչությանն անխափան և անընդհատ էլեկտրաէներգիայի մատակարարում այնպիսի պայմաններով, որը հնարավորություն կտա բավարարել նվազագույն պահանջմունքները: Այս դեպքում կարևոր խնդիրներից մեկը ռացիոնալ հաշվեկշռվածության ապահովումն է հասարակական նշանակության նպատակների և կարգավորվող ճյուղի սուբյեկտների շահերի միջև: Վերջիններիս շարքին են դասվում շուկայում մրցունակության ապահովումը, անհրաժեշտ շահույթի ստացումը և գործունեության ընդլայնման հնարավորությունները: Պետք է նշել, որ բնական մենաշնորհների սակագնային կարգավորումը չի լուծում խնդիրների այն ամբողջությունը, որոնք բխում են ոլորտի ընկերությունների կողմից թողարկվող ապրանքների և ծառայությունների սոցիալական նշանակությունից: Պետության միջամտությունն այս դեպքում պետք է պայմանավորված լինի ոչ միայն ընկերությունների կողմից իրականացվող սակագնային քաղաքականության նկատմամբ վերահսկողության, այլ նաև բնական մենաշնորհի ոլորտի կողմից թողարկվող ապրանքների և ծառայությունների սպառողների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությամբ: Այլ կերպ ասած, ոչ պակաս կարևորություն են ստանում նաև կարգավորման ոչ սակագնային մեթոդները:

Բնական մենաշնորհների գործունեության կարգավորումը պետք է դիտարկել որպես կառավարչական ներգործության անընդհատ գործընթաց բնական մենաշնորհի կառուցվածքային տարրերի համախմբի և դրանց փոխադարձ կապերի վրա՝ գոյություն ունեցող սահմանափակումների պայմաններում անհրաժեշտ ծավալով ապրանքների և ծառայությունների թողարկման և սպառողների պահանջարկի բավարարման նպատակով: Չնայած այն հանգամանքին, որ սկզբնական ժամանակաշրջանում կարգավորման մեթոդների շարքում գերակայում էր սակագնային կարգավորումը, հետագայում ի հայտ եկավ դրա հիմնական թերությունը՝ գործունեության արդյնավետության բարձրացման և ծախսերի նվազեցման խթանների բացակայությունը: Հենց դրանով էր պայմանավորված բնական մենաշնորհների կարգավորման ոչ սակագնային մեթոդների մշակման անհրաժեշտությունը, որոնց կիրառումն ավելի լայն թափ ստացավ անցած դարի 70-ական թվականներից:

Զարգացած երկրներում բնական մենաշնորհների պետական կարգավորման միասնական մեթոդ գոյություն չունի, սակայն հիմնականում առանձնացվում են կարգավորման երեք հիմնական եղանակ.

- հատուկ լիազորություններով օժտված կարգավորող մարմինների ստեղծում, որոնց իրավասությունների մեջ է մտնում բնական մենաշնորհների ոլորտում գործող, նախ և առաջ, մասնավոր ընկերությունների գործունեության նկատմամբ վերահսկողությունը,
- պետության կողմից պետական սեփականություն հանդիսացող ընկերությունների անմիջական կառավարումը,
- շուկա մուտք գործելու մրցութային պայմանների սահմանումը կամ պայմանագային հարաբերությունների միջոցով դրա կարգավորումը:[1]

Հանրային ծառայությունների շարքում իր ռազմավարական և կենսական նշանակությամբ, անշուշտ, առանձնանում է էներգետիկայի բնագավառը: Հատկապես տնտեսական զարգացման ներկա փուլում, երբ համակարգի կողմից թողարկվող արտադրանքի նկատմամբ հասարակության և տնտեսության պահանջարկը շեշտակրոեն բարձրացել է, էներգետիկ ոլորտի գործունեության կարգավորումը հանդես է գալիս որպես կարևոր նախապայման տնտեսական զարգացման կայուն տեմպերի ապահովման և տնտեսության ու հասարակության բնականոն կենսագործունեության ապահովման համար:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի Հանրապետության էներգահամակարգում գործող և էլեկտրաէներգիա արտադրող ընկերությունների ընդհանուր պատկերը հետևյալն է:

[1] Качалин В. Регулирование и дерегулирование – два направления антимонопольной стратегии в США. Мировая экономика и международные отношения. 1997. № 6. С. 5-18.

Աղյուսակ 1[2]

Էլեկտրաէներգիա արտադրող ընկերությունները ՀՀ-ում

Անվանում	Տեղակայված /տնօրինելի հզորություն, Մվտ	Արտադրանք , ԳՎտժ, /առավելագույն	Շահագործման հանձնման տարի
ՀԱԷԿ	440/385	2465 / 2400	1980 1989-1995 կանգառ 1995 վերաթողարկում
Երևան ՀՇԳՑԷ	272/220	1448 / 1760	2010
Հրազդան ՋԷԿ 1-4 բլոկ	3x200/3x185 1x210/1x185	957 / 5040	1972 1974
Հրազդան 5	480/440	858 / 3520	2011
Սևան-Հրազդան ՀԷԿ-երի կասկադ	559/559	475 / 500	1936-1962
Որոտանի ՀԷԿ-երի կասկադ	404/404	833 / 1200	1970-1989
Փոքր ՀԷԿ-եր	222/222	689 / 689	-

Հայաստանի Հանրապետությունում 2015-2016 թվականներին էլեկտրաէներգիայի և ջերմային էներգիայի արտադրության ծավալներն ունեցել են հետևյալ դինամիկան:

Աղյուսակ 2[3]

Էլեկտրաէներգիայի և ջերմային էներգիայի արտադրության ծավալները

	2015թ.	2016թ.	Տարբերությունը %
Էլեկտրաէներգիա, ընդամենը մլն կՎտ ժամ	7798.2	7 315.2	93.8
այդ թվում			
ՋԷԿ	2801.2	2 581.5	92.2
ՀԷԿ	2205.6	2 351.4	106.6
ՀԱԷԿ	2787.7	2 380.5	85.4
Այլ աղբյուրներ	3.7	1.8	48.6
Ջերմային էներգիրա, հազ. ԳՋ	160.0	90.0	56.3

[2] ՀՀ էներգետիկ համակարգի երկարաժամկետ (մինչև 2036թ.) զարգացման ուղիները: http://www.minenergy.am/

[3] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-դեկտեմբերին: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին: Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն:

Հանրապետության էներգահամակարգում վերջին տարիներին արձանագրված դրական առաջընթացով հանդերձ, առկա են նաև մի շարք հիմնախնդիրներ, որոնք էականորեն անդրադառնում են ոլորտի արդյունավետ գործունեության և մատուցվող ծառայությունների ու թողարկվող արտադրանքի սակագների վրա: Մասնավորապես, արտադրական հզորությունների 38%-ի շահագործման ժամկետը գերազանցում է 40 տարին, ՋԷԿ-երի հիմնական սարքավորումների աշխատանքի տևողությունը անցել է սահմանային 200 հազ. ժամը, դրանց տեխնիկատնտեսական և բնապահպանական ցուցանիշները չեն համապատասխանում միջազգային պահանջներին, ՀԷԿ-երում տեղակայված սարքավորումների 70%-ը շահագործվում է ավելի, քան 40 տարի, իսկ 50%-ը՝ ավելի քան 50 տարի:[4] Նման իրավիճակում, անշուշտ, արտադրական հզորությունների արդիականացումը դառնում է համակարգի կայուն զարգացման հիմնական նախադրյալ: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ արտադրական հզորությունների ֆիզիկական և բարոյական մաշվածությունը նպաստում է թողարկվող արտադրանքի ինքնարժեքի՝ հետևաբար նաև սակագների բարձրացմանը:

ՀՀ օրենսդրությամբ գազամատակարարման համակարգը ևս պատկանում է հանրային ծառայությունների ոլորտին, որում գործող ընկերությունների սակագնային կարգավորումն իրականացնում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը: Հայաստանի Հանրապետության գազամատակարարման համակարգի 2016 թվականի գործունեության հիմնական ցուցանիշներն ունեն հետևյալ պատկերը:

Աղյուսակ 3[5]

ՀՀ գազամատակարարման համակարգի հիմնական ցուցանիշները 2016 թվականին, մլն խմ

1.	***Ներկրված գազի քանակը, այդ թվում***	***2236.5***
1.1.	Ռուսաստանի Դաշնությունից	*1864.6*
1.2.	Իրանի Իսլամական Հանրապետությունից	*372.0*
2	***Գազի կորուստները փոխադրման համակարգում***	***102.5***
3.	***Փոխադրված գազի ծավալը***	***2132.4***
4.	***Գազի կորուստները բաշխման համակարգում***	***40.1***
5.	***Բաշխման համակարգում իրացված գազի ծավալը, որից***	***1844.3***
5.1.	Բնակչություն	*581.0*
5.2.	Էներգետիկա	*420.0*
5.3.	Արդյունաբերություն	*185.8*
5.4.	Ավտոգազալիցքավորման ճնշակայաններ	*467.3*

[4] Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգ

[5] Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով: http://www.psrc.am/images/docs/reports/gas/2016/4-er/gaz-xoranard-IV.pdf

5.5.	Բյուջետային կազմակերպություններ	*54.3*
5.6.	Այլ սպառողներ	*135.8*
6.	***Բնական գազի միջին ջերմարարությունը (կկալ/խմ)***	***8193***

ՀՀ հանրային ծառայությունների ոլորտին է դասվում նաև ջրային ոլորտը: Ընդհանրապես, ջրային ռեսուրսների առկայությունն, անշուշտ, յորաքանչյուր երկրի բնականոն կենսագործունեության ապահովման և զարգացման հարցում ունի ռազմավարական նշանակություն: Ջրային ռեսուրսների կառավարման համակարգի արդյունավետությունն էապես կախված է դրա ֆինանսատնտեսական վիճակից, որը համակարգի կատարելագործման տեսանկյունից ունի առանցքային նշանակություն: Հանրապետության ջրամատակարարում և ջրահեռացում իրականացնող ընկերությունների ջրային հաշվեկշիռը 2015-2016 թվականներին ունեցել է հետևյալ պատկերը:

Աղյուսակ 4.[6]

Ջրամատակարարում և ջրահեռացում իրականացնող ընկերությունների 2015-2016թթ. ջրային հաշվեկշիռը

		Չափի միավոր	2015թ.	2016 թ.
1.	Համակարգ մուտք գործած ջուր	հազ. խմ	483317.1	477700.3
2.	Ընդամենը կորուստներ համակարգում Կորուստները տոկոսային արտահայտությամբ	հազ. խմ	366041.5 75.7%	357473.4 74.8%
3.	Ջրամատակարարում	հազ. խմ	117275.6	120226.9
4.	Ջրահեռացում	հազ. խմ	99288.9	101624.0

Պետք է նշել, որ ոռոգման ենթակառուցվածքների արդյունավետությունը խիստ ցածր է, ինչը պայմանավորված է ժամանակակից սարքավորումների բացակայությամբ, առկա հիմնական ֆոնդերի ֆիզիկական մաշվածությամբ, դրանց շահագործման մեծ ծախսատարությամբ, ջրի կորուստների բարձր մակարդակով, կառավարման համակարգի անկատարությամբ, դրա օգտագործման դիմաց վճարների գանձման ցածր մակարդակով, ինչպես նաև տնտեսավարման կիրառվող սկզբունքների անկատարությամբ:

Ամփոփելով, պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունների վերը դիտարկված տեսակների մասով գոյություն ունեն մի շարք հիմնախնդիրներ, որոնք ուղղակիորեն և անուղղակիորեն անդրադառնում են այդ ոլորտներում գործունեություն իրականացնող ընկերությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների և մատուցվող ծառայությունների որակի ու արժեքի վրա: Նման պայմաններում, անշուշտ, առավել քան կարևորվում է պետական կարգավորման նշանակությունը, որը, մի կողմից, պետք է ապահովի

[6] http://www.psrc.am/am/sectors/water/reports

գործող ընկերությունների համար ֆինանսատնտեսական կայունություն, իսկ, մյուս կողմից, նպաստի սպառողների համար մատուցվող ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովմանը: Նման կարևորագույն խնդիրի լուծումը ենթադրում է հանրային ծառայությունների պետական կարգավորման որակապես նոր մոտեցումների մշակում:

Աշխատանքի երրորդ՝ "Հանրային ծառայությունների պետական կարգավորման համակարգի զարգացման հեռանկարները" գլխում մշակվել են հանրային ծառայությունների ոլորտի զարգացման ռազմավարական ուղիները, դրա կարգավորման ինստիտուցիոնալ մեխանիզմների կատարելագործման խնդիրները և հանրային ծառայությունների ոլորտներում գնագոյացման և այդ գործընթացի վերահսկողության մեխանիզմի բարելավման հիմնական ուղիները:

Հայաստանի Հանրապետությունում բնական մենաշնորհի ոլորտների պետական կարգավորման համակարգը համեմատաբար կարճ պատմություն ունի: Վերջինս մրցակցային դաշտի օրենսդրական կանոնակարգման դանդաղ ընթացքի, ոլորտում գործող ձեռնարկությունների մասնավորեցման արագ տեմպերի և նմանատիպ այլ գործոնների առկայության հետևանք է հանդիսանում: Միևնույն ժամանակ, շուկայական հարաբերությունների արմատավորմանը զուգընթաց ավելի ու ավելի ակնհայտ դարձավ բնական մենաշնորհ հանդիսացող ոլորտների պետական կարգավորման անհրաժեշտությունը, որից մեծապես կախված են ինչպես դրանցում գործող ընկերությունների գործունեության արդյունքները, այնպես էլ սպառողների շահերի ու իրավունքների պաշտպանվածության մակարդակը: Այս առումով, նախ և առաջ, կարևորվում է բնական մենաշնորհի ոլորտների և դրանցում գործունեության տեսակների շրջանակի հստակ սահմանումը, ոլորտի պետական կարգավորման էության ու բովանդակության և կարգավորող մարմնի կարգավիճակի ու գործառույթների հստակեցումը: Միաժամանակ, ակնհայտ է, որ լուծման ենթակա խնդիրների ոչ հստակ սահմանումը և կանոնակարգումը խիստ բացասական ազդեցություն է թողնում ոլորտի պետական կարգավորման համակարգի կայացման գործընթացի վրա, քանի որ նշված ոլորտների գործունեության մրցակցային տեսակները գրեթե գտնվում են նույն դաշտում, ինչ որ բնական մենաշնորհ հանդիսացող գործունեության տեսակները՝ միաժամանակ խտրական պայմաններում գտնվելով նաև մրցակցային դաշտում գործող սուբյեկտների համեմատությամբ: Բացի այդ, տվյալ մոտեցումն օբյեկտիվ և սուբյեկտիվ խոչնդոտներ է ստեղծում իրականում մրցակցային հանդիսացող գործունեության տեսակները բնական մենաշնորհի կարգավորման ոլորտից դուրս բերելու և մրցակցային դաշտ տեղափոխելու առումով: Իրականում մրցակցային հանդիսացող գործունեության տեսակների գծով սակագնային (թեկուզև անուղղակի ձևով) կարգավորումը խաթարում է այդ գործունեության ոլորտում գնագոյացման շուկայական մեխանիզմը՝ գործնականում արհեստականորեն բարձր մակարդակի վրա պահելով համապատասխան ծառայությունների սակագները:

Բնական մենաշնորհի ոլորտների պետական կարգավորման համակարգի կայացման ու կատարելագործման տեսանկյունից առաջնային լուծում պահանջող խնդիրների շարքին են դասվում այս ոլորտների պետական կարգավորման էության և բովանդակության, կարգավորման ռազմավարության, սկզբունքների և մեթոդների հստակեցումը, սպառողների համար բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների մատչելիության ապահովումը, ընդ որում՝ հիմնվելով սպառողների և կարգավորվող անձանց շահերի հավասարակշռման, ինչպես նաև հասարակական առավելագույն օգուտի ապահովման սկզբունքների համատեղման վրա: Պետք է կարևորել նաև բնական մենաշնորհների պետական կարգավորման ռազմավարական նպատակների օրենսդրորեն հստակ ամրագրումը՝ ներառելով հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց և սպառողների շահերի հավասարակշռումը, բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների մատչելիության և հասարակական շահերի գերակայության ապահովումը, ըստ անհրաժեշտության կարգավորման տարբերակված մեթոդների, սկզբունքների և մոտեցումների կիրառումը, բնական մենաշնորհ հանդիսացող գործունեության տեսակներն աստիճանաբար (հնարավորության առկայության դեպքում) մրցակցային ոլորտ տեղափոխումը և մրցակցության խթանումը, բնական մենաշնորհի ոլորտներում ներդրումների խրախուսումը և անվտագության ապահովումը, ի շահ հասարակության՝ ռեսուրսների արդյունավետ օգտագործման խթանումը, ինչպես նաև հասարակության համար կարգավորման թափանցիկության ապահովումը: Ոլորտի կարգավորման առումով անհրաժեշտ է բոլորի համար սահմանել հասկանալի և հստակ "խաղի կանոններ", ստեղծել ոլորտի պետական կարգավորման նպատակով գործառույթային անկախությամբ, անհրաժեշտ լծակներով, լիազորություններով, իրավունքներով ու պարտականություններով օժտված մեկ միասնական, անկախ պետական մարմին, որի վրա կդրվեն նաև համակարգում առկա բոլոր տեսակի հարցերի լուծման պատասխանատվությունը: Պետք է կարևորել նաև ոլորտը կանոնակարգող նոր օրենքի մշակումը և ընդունումը՝ դրանում արտացոլելով ոչ միայն կազմակերպական և իրավական կարգավորման նորմերը, այլև բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից ներդրումների կատարման նորմատիվային կարգավորիչները, ինքնարժեքի ձևավորման հարցում անհրաժեշտ սահմանափակումները, կարգավորող մարմնի և պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների ու տնտեսավարող սուբյեկտների հետ փոխհարաբերությունների մեխանիզմները, աշխատանքի մեթոդները, ընթացակարգերը և այլն՝ հնարավորինս քիչ տեղ թողնելով իրավական այլ ակտերով (առավել ևս՝ կարգավորող մարմնի ընդունած ակտերով) "խաղի կանոնների" սահմանմանը: Միևնույն ժամանակ, ՀՀ կառավարության կողմից բնական մենաշնորհի սուբյեկտների ռազմավարական բնույթի երկարաժամկետ ներդրումային ծրագրերի հաստատումը կապահովի գործուն վերահսկողություն ստանձնած պարտավորությունների ժամանակին ու պատշաճ կատարման նկատմամբ:

Որպես բնական մենաշնորհի սուբյեկտների և նրանց գործունեության ոլորտների պետական կարգավորման վերակառուցման հիմնական սկզբունքներ պետք է սահմանվեն բարեփոխումների ռազմավարության մշակման, քննարկման և կիրարկման թափանցիկությունն ու հրապարակայնությունը՝ այդ գործընթացում ներգրավելով շահագրգիռ բոլոր կողմերին, բնական մենաշնորհի սուբյեկտների, ինչպես նաև նրանց հետ փոխկապակցված անձանց ֆինանսական լիակատար թափանցիկության, բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողության ապահովումը, այդ թվում՝ նաև տվյալ սուբյեկտների կանոնադրական կապիտալում պետական մասնակցության ճանապարհով: Կարևոր նշանակություն ունեն նաև տեխնոլոգիական համալիրների միասնականության պահպանումը, ոլորտում բարեփոխումների հիմնավորվածությունը և դրա կիրառման ընթացքում բնական մենաշնորհների գործունեության խաթարման անթույլատրելիությունը, այս ոլորտներում տնտեսավարման և քաղաքականության հստակ տարանջատումը, բնական մենաշնորհների վերակառուցման համեմատությամբ սակագնային վերափոխումների առաջնահերթությունը:

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման ներկա փուլում հանրային ծառայությունների ոլորտի զարգացումը ձեռք է բերել առանցքային նշանակություն, ինչը ենթադրում է, նախ և առաջ, դրա պետական կարգավորման համակարգի կատարելագործում և այդ նպատակով կիրառվող մոտեցումների և հայեցակարգային սկզբունքների վերաիմաստավորում: Այս տեսանկյունից, հանրապետությունում առկա են մի շարք խնդրահարույց հարցադրումներ, որոնց հստակեցման պարագայում միայն հնարավոր կդառնա որոշակիացնել այդ ուղղությամբ պետական քաղաքականության ռազմավարական ուղղությունները: Մասնավորապես, որպես այդպիսիք պետք է դիտարկել.

- "բնական մենաշնորհ" հասկացության հստակեցումը և դրանում ընդգրկվող ոլորտների որոշակիացումը, ինչի արդյունքում միայն հնարավոր կդառնա մշակել պետական կարգավորման օրենսդրահիրավական և ինստիտուցիոնալ հիմքերը և կիրառվող սկզբունքները,
- պետական կարգավորում իրականացնող միասնական մարմնի կարգավիճակի հստակեցումը և վերջինիս վերապահվող գործառույթների պատշաճ իրականացման համար անհրաժեշտ լիազորությունների և իրավասությունների տրամադրումը,
- ոլորտի պետական կարգավորման տնտեսապես հիմնավորված ու արդարացված սկզբունքների և մեթոդների մշակումը,
- բնական մենաշնորհի ոլորտում սակագնային կարգավորման այնպիսի սկզբունքների և մեխանիզմների ներդրումը, որոնք հնարավորությունն կտան ապահովել ընկերությունների և սպառողների շահերի անհրաժեշտ հաշվեկշռվածություն:

Պետական քաղաքականության իրականացման առումով, թերևս, առաջին ու ամենակարևոր հարցը, "բնական մենաշնորհ" հասկացության և դրանում

ընդգրկվող ոլորտների հստակեցումն է: Խնդրի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ներկայումս ՀՀ օրենսդրությամբ տվյալ հասկացությունը և դրա մեկնաբանությունը սահմանված չեն: Մեր կարծիքով, բնական մենաշնորհների պետական կարգավորման առումով, նախ և առաջ, պետք է օրենսդրորեն սահմանել տվյալ երևույթը և հստակեցնել դրա սահմանները: Ի դեպ, այդ մասին է վկայում նաև նշված երկրների փորձը: Սակայն ինչքան էլ տարօրինակ հնչի, հանրապետությունում գործող օրենսդրական դաշտում ոչ միայն բնական մենաշնորհների, այլ նաև ընդհանրապես մենաշնորհների վերաբերյալ իրավական դրույթները բացակայում են: Անշուշտ, նման իրավիճակը որոշակի անորոշություն է մտցնում տվյալ ոլորտում ծագող հարաբերությունների կարգավորման ենթակա լինելու կամ չլինելու առումով: Ավելին, հանրապետության օրենսդրական դաշտում ներկայումս օգտագործվող "հանրային ծառայություններ" հասկացությունը, որի տակ, ինչպես արդեն նշեցինք, նկատի է առնվում բնական մենաշնորհի ոլորտը, ավելի շատ ստեղծում է անորոշություն և աղավաղում է տվյալ կատեգորիայի իրական պատկերը: Բացի այդ, հանրային ծառայություններն ավելի ընդգրկուն են և դրանց ոչ բոլոր տեսակներն են իրենցից ներկայացնում բնական մենաշնորհներ և ենթական են պետական կարգավորման:

Սակագների հաշվարկման ժամանակ կարևոր խնդիրներից մեկն, անշուշտ, կարգավորվող ընկերությունների կողմից կատարվող ծախսերի հիմնավորվածության և արդարացվածության գնահատումն է: Վերջինս, մեր կարծիքով, պետք է հանդիսանա կարգավորող հանձնաժողովի գործունեության առանցքային ուղղություններից մեկը: Որպես լուծում կարող է դիտարկվել ինքնարժեքի մաս կազմող ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեցող հոդվածների (այդ թվում՝ նաև ներկայացուցչական ծախսերի, գործուղումների, աշխատավարձի) գծով Հանձնաժողովի կողմից հնարավոր առավելագույն շեմի սահմանումը, որը յուրօրինակ զսպաշապիկ կարող է հանդիսանալ ընկերությունների համար ավելորդ և չհիմնավորված ծախսերի իրականացման համար:

Հաջորդ կարևոր խնդիրները կարգավորվող ընկերությունների կողմից ներդրումների իրականացման նկատմամբ անհրաժեշտ վերահսկողության իրականացումն է, նախ և առաջ, ներդրումների որոշակիացման և հստակեցման տեսանկյունից: Մեր կարծիքով, ներդրումային գործընթացն առավել արդյունավետ և վերահսկելի դարձնելու համար անհրաժեշտ է մշակել ներդրումային ծրագրերի նախագծման, պլանավորման և ստացված արդյունքների ստուգման գործուն մեխանիզմներ, որոնց շրջանակներում հաշվի կառնվեն տվյալ ոլորտի զարգացման և արդյունավետության բարձրացման քանակական ու որակական ցուցանիշները:

Ատենախոսության եզրակացություններում ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքերը և հակիրճ ձևակերպված են եզրահանգումները՝

1. Ազատ մրցակցության վրա հիմնված շուկայական համակարգը նպաստում է ռեսուրսների ռացիոնալ տեղաբաշխմանը և արտադրության

արդյունավետության բարձրացմանը: Սակայն արտաքին ազդակների գոյության, հասարակական բարիքների յուրահատկության և մի շարք այլ գործոնների պատճառով կատարյալ մրցակցությունը չի հանդիսանում շուկայի բնական վիճակ: Մի շարք ոլորտների տեխնոլոգիական առանձնահատկությունների պատճառով արդյունավետ և քիչ ծախսատար արտադրություն կարելի է ապահովել միայն բացարձակ և հարաբերական արտահայտությամբ խոշոր արտադրողների առկայության պարագայում: Հենց դրանով է պայմանավորված մեկ սուբյեկտի կողմից ամբողջ արտադրության կենտրոնացման անհրաժեշտությունը, որի արդյունքում ձևավորվում են բնական մենաշնորհները: Որպես կանոն, դրանցում մրցակցությունը կամ հնարավոր չէ, կամ էլ ցանկալի չէ՝ հատկապես խոշորածավալ ծախսերի անհրաժեշտության պատճառով:

2. Պետական քաղաքականության իրականացման առումով, թերևս, առաջին ու ամենակարևոր հարցը, "բնական մենաշնորհ" հասկացության և դրանում ընդգրկվող ոլորտների հստակեցումն է: Խնդրի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ներկայումս ՀՀ օրենսդրությամբ տվյալ հասկացությունը և դրա մեկնաբանությունը սահմանված չեն: Բնական մենաշնորհների պետական կագավորման հետ կապված հարաբերությունները հանրապետությունում կարգավորվում են մի քանի օրենքներով: Հարաբերությունների կարգավորմանն ուղղված իրավական ակտերի նման բազմազանությունն, անշուշտ ստեղծում է մի շարք դժվարություններ ոչ միայն միասնական օրենսդրական դաշտի ձևավորման, այլ նաև ընդհանուր քաղաքականության իրականացման տեսանկյունից: Նման իրավիճակում, անշուշտ, հնարավոր չէ մշակել և իրականացնել միասնական սկզբունքների վրա հիմնված բնական մենաշնորհների պետական կարգավորման քաղաքականություն: Այս առումով, կարծում ենք, հանրապետությունում պետք է ընդունել "Բնական մենաշնորհների մասին" օրենք, որը հնարավորություն կընձեռի մշակել և իրականացնել առավել հավասարակշռված պետական կարգավորման քաղաքականություն: Նման առաջարկությունը հիմնավորվում է հետևյալ փաստարկներով: Նախ և առաջ, "Հանրային ծառայություններ" հասկացությունը լիարժեք չի արտահայտում տվյալ բնագավառի էություն ու բովանդակությունը: Միևնույն ժամանակ, հանրապետությունում օրենսդրորեն սահմանված հանրային ծառայությունների ոլորտները, խոշոր հաշվով, իրենցից ներկայացնում են բնական մենաշնորհներ և նման պարագայում, այդ հասկացության օգտագործումն ավելի շատ խեղաթյուրում է ընդհանուր պատկերը: Բացի այդ, տարբեր օրենսդրական ակտերում նմանատիպ հարաբերությունների կարգավորմանն ուղղված դրույթների առկայությունը երկիմաստ մեկնաբանությունների և տարընթերցումների տեղիք է տալիս, նվազեցնելով պետական կարգավորման արդյունավետությունը:

3. Հանրային ծառայությունների պետական կարգավորման կատարելագործման տեսանկյունից կարևորվում է կարգավորող

մարմնի ծրագրային փաստաթղթերի, հաշվետվությունների իրավական "կարգավիճակի" հստակեցումը՝ հատկապես դրանց հետևանքների առաջացման առումով: "Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին" ՀՀ օրենքով հանձնաժողովի գործունեության նկատմամբ անհրաժետ վերահսկողություն, որպես այդպիսին, չի իրականացվում, քանի որ սահմանված չեն հանձնաժողովի կողմից Ազգային ժողովին ներկայացվող փաստաթղթերի հաստատման կամ չհաստատման իրավական հետևանքները: Նման իրավիճակում, ինչ որ առումով, դրանց նշանակությունը և կարևորությունը նվազում է և գործընթացը ձեռք է բերում ձևական բնույթ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշվածներն, ըստ էության, ծրագրային փաստաթղթեր են, նախ և առաջ, անհրաժեշտ է օրենքով սահմանել դրանց ներկայացվող պահանջները, որոնք իրենց մեջ կներառեն պետական կարգավորման մեթոդները, սկզբունքներն ու ձևերը, ներդրումային ծրագրերից ակնկալվող արդյունքները, Հանձնաժողովի գործունեության հիմնական ուղղություններն ու կատարված աշխատանքները: Միաժամանակ, անհրաժեշտ է հանձնաժողովի առաջիկա տարվա ֆինանսավորման ծրագիրը և հաշվետու տարում կատարված ծախսերի մասին հաշվետվությունը պարտադիր ենթարկել անկախ աուդիտորի կողմից ստուգումն՝ դրա վերաբերյալ եզրակացությունը ֆինանսավորման ծրագրի հետ միասին ընդգրկելով բյուջետային փաստաթղթում: Ազգային ժողովի կողմից Հանձնաժողովի գործունեության նկատմամբ որոշակի վերահսկողություն սահմանելու համար, կարծում ենք, պետք է օրենսդրորեն ամրագրել գործունեության տարեկան ծրագիրը և հաշվետվությունը ՀՀ ԱԺ-ի կողմից օրենքով հաստատվելու պահանջ: Ընդ որում, դրանց չհաստատումը պետք է հանգեցնի Հանձնաժողովի անդամների հրաժարականին: Նման մեխանիզմը, մեր կարծիքով, հնարավորություն կտա առավել բարձրացնել Հանձնաժողովի պատասխանատվությունը օրենսդիր մարմնի և հասարակության առաջ, միաժամանակ, ավելի թափանցիկ ու հրապարակային դարձնելով Հանձնաժողոեվի գործունեությունը:

4. Հանրապետությունում գոյություն ունեցող հիմնախնդիրներից մեկը բնական մենաշնորհի ոլորտների սակագնային կարգավորման բնագավառում օրենսդրահիրավական միասնական հիմքի բացակայությունն է, ինչը տարաբնույթ հակասությունների և մեկնաբանությունների տեղիք է տալիս: Անշուշտ, սակագնային կարգավորման առումով կարևորագույն հարցը սակագների ձևավորման սկզբունքների հստակ ամրագրումն է, որի վրա էլ պետք է խարսխվեն սակագնային քաղաքականությունը և դրա իրականացմամբ պայմանավորված քայլերը: Ներկայումս հանրապետությունում էներգետիկայի, ջրային համակարգի և հեռահաղորդակցության ծառայությունների ոլորտներում համապատասխան օրենքներով սահմանված են սակագների ձևավորման սկզբունքները, որոնք

ընդհանրությունների հետ միասին ունեն նաև որոշակի տարբերություններ: Դրանց շարքում առաջնայինն ու որոշիչն են ծառայությունների մատուցման համար կատարված արտադրական ծախսերը և ողջամիտ շահութաբերության ապահովումը: Նման իրավիճակում, անշուշտ կարգավորող մարմնի հիմնական խնդիրն է դառնում ինքնարժեքի մեջ մտնող ծախսերի հիմնավորվածության և արդարացվածության գնահատումը: Որպես լուծում կարող է դիտարկվել ինքնարժեքի մաս կազմող ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեցող հոդվածների (այդ թվում՝ նաև ներկայացուցչական ծախսերի, գործուղումների, աշխատավարձի) գծով Հանձնաժողովի կողմից հնարավոր առավելագույն շեմի սահմանումը, որը յուրօրինակ զսպաշապիկ կարող է հանդիսանալ ընկերությունների համար ավելորդ և չհիմնավորված ծախսերի իրականացման համար: Ինչ վերաբերում է թույլատրելի շահույթի մեծությանը, ապա այն, անշուշտ, պետք է հնարավորություն տա ընկերություններին կատարել սեփական (նախ և առաջ՝ ֆինանսական) պարտավորությունները, և ապահովել ընկերությունների զարգացման համար անհրաժեշտ լրացուցիչ սեփական կամ փոխառու միջոցների ներգրավում: Անշուշտ, կարգավորման գործընթացում կարգավորող մարմինը շահութաբերության նորման սահմանելիս պետք է նաև հաշվի առնի այնպիսի գործոններ, ինչպիսիք են երկրի սոցիալ-տնտեսական վիճակը, բնակչության սոցիալական ապահովվածության մակարդակը, գործարար միջավայրի վիճակը և այլն:

5. Անհրաժեշտ է կարգավորվող ընկերությունների կողմից ներդումների իրականացման նկատմամբ իրականացնել պատշաճ վերահսկողություն, նախ և առաջ, ներդրումների որոշակիացման և հստակեցման տեսանկյունից: Մեր կարծիքով, ներդրումային գործընթացն առավել արդյունավետ և վերահսկելի դարձնելու համար անհրաժեշտ է մշակել ներդրումային ծրագրերի նախագծման, պլանավորման և ստացված արդյունքների ստուգման գործուն մեխանիզմներ, որոնց շրջանակներում հաշվի կառնվեն տվյալ ոլորտի զարգացման և արդյունավետության բարձրացման քանակական ու որակական ցուցանիշները: Բացի այդ, կարգավորվող ընկերությունների որոշակի արժեքը գերազանցող ներդրումային ծրագրերը պետք է պարտադիր կերպով հաստատվեն ՀՀ կառավարության կողմից: Այս առումով, ներդրումային պետք է դիտարկել բոլոր այն ծրագրերը, որոնք ուղղված են կարգավորվող ընկերությունների ընդլայնմանը, արդիականացմանը, տեխնիկական վերակառուցմանը, ակտիվների համալրմանը՝ կարճաժամկետ, միջինժամկետ և երկարաժամկետ հեռանկարում սոցիալ-տնտեսական էֆեկտի ստացման նպատակով:

6. Բնական մենաշնորհների նկատմամբ պետական կարգավորումը չպետք է սահմանափակվի միայն գնագոյացման մեխանիզմի վերահսկողությամբ և սակագների հաստատմամբ: Պետք է մշակվեն բնակչությանը մատուցվող ծառայությունների հստակ ստանդարտներ և տեխնիկական

կանոնակարգեր: Սպառողների շահերի պաշտպանության շրջանակներում անհրաժեշտ է սահմանել բնակչությանը մատուցվող ծառայությունների տրամադրման տեխնիկական և որակական չափորոշիչներ և դրանց խախտման կամ մատուցվող ապրանքների անորակության հետևանքով առաջացած վնասների համար ծառայություններ մատուցող ընկերություններին պատասխանատվության ենթարկելու և սպառողներին փոխհատուցում հատկացնելու նպատակով ներդնել համապատասխան մեխանիզմներ: Բնական մենաշնորհների պետական կարգավորման համար կարևորվում են նաև ինքնարժեքի ձևավորման հարցում անհրաժեշտ սահմանափակումների օրենսդրորեն ամրագրումը, բնական մենաշնորհի սուբյեկտներ հանդիսացող ընկերությունների հաշվեկշիռների, կորուստների չափերի, փաստացի ներդրումների, համակարգում աշխատավարձերի չափի, ծառայողական ավտոմեքենաների քանակի և գնի, սահմանվող սակագների հիմնավորվածության և բնակչության համար մատչելիության վերաբերյալ տեղեկատվության պարբերական հրապարակումը: Ավելին, մեր կարծիքով բնական մենաշնորհ հանդիսացող այն ընկերություններին, որոնք ռազմավարական նշանակություն ունեն երկրի ազգային անվտանգության տեսանկյունից, անհրաժեշտ է օրենսդրական մակարդակով զրկել առևտրային գաղտնիք ունենալու իրավունքից: Ըստ հաշվապահական հաշվառման հոդվածների ամբողջական և լիարժեք տեղեկատվությունը պետք է հասանելի լինի շահագրգիռ կողմ հանդիսացող պետական կառավարման մարմինների համար: Բացի այդ, անհրաժեշտ է կանոնավոր կերպով իրականացնել տեխնիկական աուդիտ (անկախ փորձաքննություն) բնական մենաշնորհի ոլորտում գործող ընկերությունների ծախսերի բոլոր՝ ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային տեսակների տնտեսական նպատակահարմարության վերաբերյալ:

Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլված են հրատարակված հետևյալ գիտական հոդվածներում:

1. Վարդան Բոստանջյան, Հայկ Բաղդասարյան "Հանրային ծառայությունների կարգավորման մեթոդները և դրանց առանձնահատկությունները", "Այլընտրանք" գիտական հանդես. 2015#1, "Այլընտրանք" հետազոտական կենտրան, Երևան 2015թ., էջ 83-89:

2. Հայկ Բաղդասարյան "Բնական մենաշնորհների պետական կարգավորման առանձնահատկությունները և նպատակները", Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները. գիտական հոդվածների ժողովածու-1(22), Երևանի "Անանիա Շիրակացի" միջազգային հարաբերությունների համալսարան, Երևան 2015թ., էջ 101-107:

3. Հայկ Բաղդասարյան "Բնական մենաշնորհների առաջացման պատճառները և դրանց առանձնահատկությունները": Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտ: Տնտեսության զարգացման և կառավարման

հիմնախնդիրներ: Պարբերական գիտական ժողովածու, Գիրք 8. Երևան, 2015թ. էջ 105-112:

4. Հայկ Բաղդասարյան "Բնական մենաշնորհների պետական կարգավորման հիմնախնդիրները և դրանց լուծման մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում": Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտ: Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ: Պարբերական գիտական ժողովածու, Գիրք 8. Երևան, 2015թ. էջ 297-306:

5. Հայկ Բաղդասարյան "Բնական մենաշնորհների գործունեության հիմնական առանձնահատկությունները", "Այլընտրանք" գիտական հանդես 2016#1, "Այլընտրանք" հետազոտական կենտրան, Երևան 2016թ., էջ 241-246:

6. Հայկ Բաղդասարյան "Բնական մենաշնորհների հիմնական գործառույթները և դրանց իրականացման մեխանիզմները", "Այլընտրանք" գիտական հանդես 2017#4, "Այլընտրանք" հետազոտական կենտրան, Երևան 2017թ., էջ 45-51:

Айк Эдуардович Багдасарян

Проблемы государственного регулирования публичных услуг и их решения в Республике Армения

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 ,,Экономика, управление хозяйством и его сферами,,

Защита диссертации состоится 8-ого декабря 2017г. в 15.00 часов на заседании специализированного совета 015 ВАК РА по экономике, действующего в Ереванском государственном университете по адресу: 52 Абовяна, Ереван, 0025 РА

Работа посвященя разработке подходов и предложений повышения эффективности государственного регулирования сектора государственной службы в РА. С этой целью были изучены и решены следующие проблемы:

- изучение сущности государственной службы, ее тестовая методическая основа, подходы к формулировке и экономическое содержание, а также оценка их роли в обеспечении жизнидеятельности страны и общества,
- анализ связи между государственной службой и естественными монополиями и выявление существующих сходств,
- изучение основных проблем государственного регулирования государственной службы, целей, принципов и существующих моделей, выявление основных возможностей их использования в Республике,
- выработка способов совершенствования механизма ценообразования и контроля этого процесса,
- анализ состояния сектора государственной службы в Республике, факторы, которые негативно влияют на деятельность компаний сектора, и выработка стратегических и концептуальных способов повышения эффективности государственного регулирования в сфере государственной службы.

Объектом исследования является сектор государственной службы РА, а предметом исследования - политика государственного регулирования сектора государственной службы.

Первая глава работы посвящена изучению социально-экономического содержания государственной службы, ее основных функций, особенностей деятельности, проблем и задач государственного регулирования.

Вторая глава диссертации посвящена изучению методов государственного регулирования государственной службы, международного опыта сектора, а так же описанию сектора государственной службы РА и особенностей его государственного регулирования.

Третья глава работы приводит разработанные в диссертационной работе стратегические средства совершенствования государственной службы, подходы улучшения институциональных механизмов регулирования, механизмы ценообразования сектора государственной службы а также механизмы управления процесса еефункционирования .

Основные научные результаты работы, обусловленные задачами изложенными в работе состоят вследующем:

- на основе всестороннего анализа концепций ,,государственная служба,, и ,,естественная монополия,, был выявлен их основной характер, выяснены их пределы и сходства, оценена роль государственной службы в естественном развитии экономической системы,
- на основе всестороннего анализа методов совершенствования сектора государственной службы были предложены возможные способы использования каждого из них в Республике с учетом обеспечения баланса интересов существующих компаний и потребителей, а также были разработаны методы совершенствования сектора, регулирования естественных монопольных тарифов, улучшения их контроля осуществляемого регулирующим органом,
- был разработан комплекс законодательных и организационных мер, направленных на повышение эффективности государственного регулирования эффективности сектора естественных монополий в Республике Армения, включая секторы естественной монополии, виды деятельности, принципы регулирования и разъяснения и разработки законодательной базы.

Hayk Eduard Baghdasaryan

Problems of state regulation of public services and their solutions in the Republic of Armenia

The summary of the dissertation submitted for the pursuing scientific degree of PHD in Economics on a specialty 08.00.02- "Economy, management of the economy and its spheres". Defense of the dissertation will be held on the December 08, 2017 at 1500 at the meeting of the 015 Specialized Council in Economics of the Supreme Certifying Commission Republic of Armenia acting at the Yerevan State University. Adress: 52 Abovyan str., Yerevan, 0009.

SUMMARY

The Dissertation studies problems of the development of approaches and mechanisms devoted to the increase the efficiency of state regulation in public service sector in RA. To solve studied problem following issues were set up and presented in the Dissertation:

- The study of the content of state service, its testing and methodological basis and the role to provide maintenance of country and society,
- The study of the relation between state service and monopolies to elicit existing similarities,
- The study of problems of State Regulation of State Service, its aims, principles and existing models to elicit possibilities for the use in the Republic Armenia
- The development of methods for providing the improvement of pricing mechanisms and control its process,
- The analysis of State Service Sector, factors having negative impact on its companies functioning to elicit strategies and concepts providing the improvement its functioning processes,
- to analyze the link between the public service and natural monopolies, discover the existing similarities,
- to explore the main problems of state regulation of public service, the aims, principles and existing models, to discover the main opportunities of their uses in the Republic,
- to work out ways of improvement of pricing mechanism and control over this process,
- to analyze the public service sector fettle in the Republic, the factors that negatively affect the activities of the companies included in the sector and to work

out strategic and conceptual means to increase the effectiveness of state regulation in public service sector.

The object of the Dissertation is the State Service Sector of the Republic of Armenia, and the subject of the study is the policy of state adjustment of the State Service Sector.

The first chapter of the dissertation is devoted to the study social-economic content of the public service, its main functions, activity features and the state regulation problems.

The second chapter of the dissertation is devoted to the study of the state regulation methods of the public service, the use of international experience regulation of the sector. Taking into consideration studies issue the description of the public service sector of RA and its state regulation peculiarities are given also.

The third chapter of the work includes developed in the Dissertation strategic means of public service improvement, improvement of regulation of institutional mechanisms, public service sector pricing mechanism and process control mechanism amelioration problems.

The main scientific results developed in the work are as follows:

- based on the comprehensive analysis of "public service" and "natural monopoly" concepts their main nature was discovered, limits and similarities were clarified, the role of public service in natural development of economic system was assessed,
- existing problems in public service sector in the Republic were discovered and approaches and suggestions of solution, as well as long-term and short-term state policy strategic and challenge means toward it were worked out,
- based on comprehensive analysis of public service sector improvement methods possible means and modes of using each of them in the Republic were suggested, taking into consideration the provision of balance in interests of existing companies and consumers in the sector improvement approaches to natural monopoly tariff regulation as well as suggestions to improve control realized by the regulatory body were offered,
- a complex of legislative and organizational measures aimed at increase of state regulation effectiveness of natural monopoly sector in the Republic of Armenia was worked out, including natural monopoly sectors, activity types, regulation principles and legislative basis clarification and development.